REPUBLIC OF ARMENIA
COMPETITION PROTECTION
COMMISSION

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОМИССИЯ
ПО ЗАЩИТЕ КОНКУРЕНЦИИ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«06» 10 2022թ.

No 006114

ՊԱՐՈՆ ԴՄԻՏՐԻՅ ԴԵՄՉԵՆԿՈՅԻՆ

(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության 14)

Հարգելի՛ պարոն Դեմչենկո,

Ի պատասխան Ձեր՝ 2022 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ ՄՊՀ-005982 գրության, տեղեկացնում ենք, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2022 թվականի օգոստոսի 23-ի «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 25-ի N 77-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 302-Ա որոշման 130-րդ կետի համաձայն՝ վարույթի մասնակիցները կարող են ծանոթանալ վարույթի վերաբերյալ գործի նյութերին:

ГОСПОДИНУ ДМИТРИЮ

ВЛАДИМИРОВИЧУ ДЕМЧЕНКО

(РА, г. Ереван, Проспект Азатутян 14)

Уважаемый господин Демченко!

В ответ на Ваше письмо № МРН-005982 от 30 сентября 2022 года уведомляем, что согласно пункту 130 решения № 302 от 23 августа 2022 года Комиссии по защите конкуренции (далее – Комиссия) «Об утверждении регламента работы Комиссии по защите конкуренции и о признании утратившим силу решения Государственной Комиссии по защите экономической конкуренции № 77-Н от 25 мая 2021 года» участники производства могут ознакомиться с материалами дела о производстве.

Согласно 1-ому пункту статьи 74 закона «О защите экономической конкуренции» (далее – Закон) участниками производства

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակիցներն են՝

1) վարույթով պատասխանողը.

2) շահագրգիռ անձը.

3) իրավասու մարմինները:

Միաժամանակ, Օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առևտրային, բանկային, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, որոնք ստացվել են սույն օրենքով տրված լիազորությունների կատարման ժամանակ, Հանձնաժողովի կողմից պահպանվում են օրենքով սահմանված կարգով:

Վարույթի վերաբերյալ գործի նյութերին ծանոթանալիս Հանձնաժողովը ապահովում է պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկատվության պահպանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերին կարող են ծանոթանալ միայն վարույթի մասնակիցները, մասնավորապես՝ վարույթով պատասխանողը, շահագրգիռ անձը, իրավասու մարմինները: Միաժամանակ, Հանձնաժողովը պարտավոր է պահպանել առևտրային, բանկային, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունները:

относительно правонарушения в сфере экономической конкуренции являются:

1) ответчик по производству;

2) заинтересованное лицо;

3) компетентные органы.

При этом в соответствии с 1-ым пунктом 44 статьи Закона сведения, являющиеся коммерческой, банковской, служебной или охраняемой законом иной тайной, которые получены при исполнении предоставленных настоящим Законом полномочий, хранятся сией в установленном законом порядке.

Таким образом, при ознакомлении с материалами производства, Комиссия обеспечивает защиту сведений, составляющих государственную и иную охраняемую законом тайну.

Из системного анализа приведенных выше правовых норм следует, что с материалами производства относительно правонарушения в сфере экономической конкуренции могут ознакомиться только участники производства, в частности ответчик по производству, заинтересованное лицо, компетентные органы. При этом Комиссия обязана сохранять коммерческую, банковскую, служебную или иную охраняемую законом конфиденциальную информацию.

В данном случае, Комиссия по защите конкуренции решением № 177-А от 3 мая 2022 года возбудила административное производство «О возбуждении административного производства о нарушениях в сфере экономической

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը 2022 թվականի մայիսի 3-ի «Մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 177-Ա որոշմամբ (այսուհետ նաև՝ Թիվ 177-Ա որոշում) հարուցել է վարույթ (այսուհետ նաև՝ Վարույթ), որով մասնակիցներ են համարվում «Մեգատորգ», «Յագո», «Զաքար Պրոդուկտ», «Ոսկե Արծիվ», «Սելխոզ-Ֆուդ», «Ալֆա Էդ», «Սակ Բրադերս», «Արագածի թռչնաբուծական ֆաբրիկա», «Արագած Ֆուդ» և «Արմագրո Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հանձնաժողովի՝ Վարույթի նյութերում առկա օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունների պահպանման պարտականությունը՝ Հանձնաժողովը Վարույթի նյութերը այլ անձանց չի տրամադրում:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ Հանձնաժողովի կողմից կայացված որոշումները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքում (www.competition.am):

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Մրցակցության գնահատման և վերահսկողության վարչություն
Կատարող՝ Տաթևիկ Հովհաննիսյան,
Հեռ. (+374 60) 830-840 (235)

конкуренции в отношении ряда хозяйствующих субъектов» (далее – Производство), участниками которого являются общества с ограниченной ответственностью «Мегаторг», «Яго», «Захар Продукт», «Золотой орел», «Сельхоз-Фуд», «Альфа Эф», «Сак Брадерс», «Арагацская Птицафабрика», «Арагац Фуд» и «Армагро Холдинг».

С учетом вышеизложенного, а также принимая во внимание обязанность Комиссии по сохранению охраняемой законом информации, содержащейся в материалах Производства, Комиссия не предоставляет материалы Производства иным лицам.

Одновременно сообщаем, что решения, принимаемые Комиссией, публикуются на официальном сайте Комиссии (www.competition.am).

С УВАЖЕНИЕМ, АШОТ ВАГАНЯН

Управление по оценке и контролю конкуренции
Исполнитель: Татевик Оганесян
Тел. (+374 60) 830-840 (235)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 17 նոյեմբերի 2022 թվական: